«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Բնագրերը չընթերցելու խնդիրը գրականության մեջ, լուծելու միջոցներն ու հնարները:

Բովանդակություն

1.Նախաբան -3-4

2.Գրականության ակնարկ -4 -6

3.Գործնական համատեքստ

4.Ամփոփում

5.Օգտագործված գրականություն

Նախաբան

Այսօր կրթության ոլորտում համակարգային փոփոխություններ են կատարվում:Առկա են բազում խնդիրներ:Ու այս փոփոխությունների շրջանակներում էլ ավելի է կարևորվում է նպատակային ուսուցումը,մարդկային արժեքների,ազգային արժեհամակարգի ձևավորումը:

Արժեհամակարգ ձևավորելու համար դպրոցի,մանկաարժների աշխատանքը շատ կարևոր է, բայց քիչ է:Այստեղ նրանց օգնության պիտի գան ոչ միայն ծնողները,այլ նաև իրենք՝ սովորողները;Արժեհամակարգ ձևավորելու համար անհրաժեշտ են շատ գործոններ:Դեռ վաղ ժամանակներից ընդգծվել,ասվել է,որ այդ գործում իր ուրույն բացառիկ դերը ունի ընթերցանությունը,գրքի հետ մարդու ,սովորողի կապը:Շատ կարևորէ , որ երեխաները կարդան,կապվեն գրքին:Ցավոք, մեր օրերում շատ դժվար է երեխային կապել գրքին :

Այո, այսօր թե ծնողներին և թե ուսուցիչներին անհանգստացնող խնդիրներից մեկն հենց այդ է, որ երեխաներն ու դեռահասները ավելի ու ավելի քիչ են կարդում: Երեխաները ազատ ժաման ակ հաճախ զբաղվում են արտադպրոցական գործունեությամբ և, առաջին հերթին, հեռուստատեսության և նոր տեխնոլոգիաների օգտագործմամբ: Համակարգիչը, տեսախաղերը, հեռուստատեսությունը ստիպում են ավելի շատ ժամանակ նվիրել իրենց,և գրքի հետ կապը շատ է պակասել :Համակարգչային տեխնոլոգիաների ներմուծմանը զուգընթաց աշխարհում զգալիորեն նվազել է հետաքրքրությունը գրադարաններ այցելելու և ընթերցանության նկատմամբ:Այո,կրթության ,դպրոցի նպատակներից է խթանել ընթերցանության զարգացմանը,քանի որ ընթերցանությունը ժամանակակից հասարակության կրթության և կյանքի համար ֆունկցիոնալ, հիմնական հմտություն է, այն մայրենի լեզվի պահպանման և զարգացման մեխանիզմ է: Դպրոցի,կրթական համակարգի ամենօրյա հորդորը պիտի լինի այն,որ աշակերտները շատ կարդան, որովհետև գիրքը լուսավորում, հարստացնում է հոգին և մարդու մեջ արթնացնում նրա լավագույն ձգտումները: Շատ կարևոր է ընթերցանությունը նաև այն առումով,որ օգնում է մյուս առակաները ավելի լավ սովորելուն: Եթե աշակերտը կարդալ չկարողանա,չի կարողանա սովորել նաև մյուս առարկաները;Ընթերցանության խրախուսումը և ինչպես ցանկացած գործում, ասյտեղ ևս նորարարական բազմաթիվ եղանակներ և հնարներ կան, բայց կա մի պարզ ճշմարտություն, որն անփոփոխ է. այստեղ հաջողություն մենք կարող ենք արձանագրել,եթե աշակերտը սիրով է վերաբերվում այդ գործընթացին;

Եթե նա սիրով չի կատարում որևէ գործ,այդտեղ դժվար թե առաջընթաց գրանցվի:Ցանկացած գործ կարող է հաջողություն ունենալ,

եթե սովորողը դրանից հաճույք է ստանում, ցուցաբերում է նախաձեռնությունը:. Ընթերցանությունը արդյունավետ լինելու համար պետք է հետաքրքրի ընթերցողին: Ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը պետք է զարգացնել սովորողների մեջ: Ընթերցանությունը երբ զվարճալի է, ընդլայնում է գիտելիքները, թույլ է տալիս ապրել նոր պատմություններով, զարգացնում է երևակայությունը և մոտեցնում այն իրողություններին, որոնք այլ կերպ նրանք չեն կարող իմանալ: Գրքի ազդեցությունը մարդու վրա շատ մեծ է:Իսկ ինչպես երեխային կապել գրքին:Շատերն են քննել այս խնդիրը:Գոհար Բալջյանը իր հետազոտական աշխատանքի մեջ կարևորելով գրքի կապը՝ գտնում է,որշատ կարևոր է երեխան սիրելով գիրք կարդա, իսկ դրա համար սեր գրքի նկատմամբ պետք է դաստիարակել մանկուց, պիտի հաճախակի հանդիպումներ կազմակերպել,քննարկումներ անել,իսկ Հասմիկ Հակոբյանը իր ,,Կարդալ,թե՝ ընթերցել,, հոդվածում խոսելով ընթերցանության հետ կապված խնդիրների մասին,ընդգծում է,որ ժամանակակից տեխնոլոգիա ների դարում մարդիկ քիչ են կարդում գեղարվեստական գրականություն,ավելի շատ կարդում են տեղեկատվական հոդվածներ,որոնք գեղարվեստական ճաշակ չեն կարող բարձրացնել և իզուր վատնում են իրենց ժամանակը:Իսկ գեղարվեստական գրականություն կարդալը անհրաժեշտ է,որովհետև այն զարգացնում է մարդու հիշողությունը,կարդացողները տիրապետում են գեղեցիկ խոսքի արվեստին,հեշտությամբ հաղորդակցվում են շրջապատի մարդկանց հետ,զարգացնում է ստեղծագործականությունը,կարդացող մարդիկ առավել ինքնուրույն են:Նա վկայակոչում է,որ ,,բոլոր հանճարեղ մարդիկ եղել են հանճարեղ ընթերցողներ,,:Խոսելով ընթերցանության անկման մասին՝ հեղինակը կարևորում է դպրոցում,,Գրականություն,,ուսումնական առարկայի դերը և ուսուցչի դերը:Ըստ նրա՝ ուսուցիչը պետք է խուսափի պարտադրանքից,, համոզի, ցույց տա որ գրքի ընթերցումը շատ կարևոր է և պեքական,հիմնավորի պետքական լինելը,քանի որ այսօրվա սերունդը հետաքրքրություն է ցուցաբերում պետքականի նկատամբ:Շատ կարևոր է համապատասխան գրականություն ընտրելը;Չի կարելի աշակերտին պարտադրել մի բան,որի նկատմամբ նրա ուղեղն անընկալունակ է; Եվ որ ընթերցանությունը պետք է զարգացնել պետականորեն մշակված որոշակի ծրագրերով ու մեթոդներով:

Լուսինե Գաբրիելյանն էլ իր ,,Ընթերցանության զարգացման նոր մոտեցումներ,,հետազոտական աշխատանքի մեջ անդրադառնում է ,թե ինչպես է զարգացնում ընթերցելու հմտություններն ու կարողությունները փոքր տարիքում:Խոսում է ընթերցելու հմտությունները զարգացնելուՈւղղորդված ընթերցանություն,Անհատական ընթերցանություն,Տևական լուռ ընթերցանություն մեթոդների մասին :

Այստեղ ինձ հոգեհարազատ էր ***Համատեղ գիրք մեթոդը: Բառացի մեջբերենք այդ մեթոդի մասին: Համատեղ գիրք մեթոդըչափազանց տարածված է Նոր Զելանդիայի նախադպրոցական ևտարրական դպրոցներում, սակայն պետք չէթերագնահատել մեթոդի դերը նաև միջինև ավագ դպրոցներում, քանի որ միջինդպրոցում բարձրաձայն համատեղ ընթերցանության եղանակի արդյունավետությունը հենվում է հետազոտության արդյունքների վրա. այս մեթոդի ուժն իր պարզության մեջ է, քանի որ ուսուցիչը պարզապես ժամանակ է հատկացնում աշակերտների համար բարձրաձայն տեքստ ընթերցելուն՝ մոդելավորելով լավ ընթերցողի հմտությունները: Մեթոդը զարգացվել է նորզելանդացի Դոն Հոլդավեի կողմից: Համատեղ գիրքը մեթոդը նպատակ ունիընթերցողներին ցույց տալու ընթերցանության հաճելի գործընթացը: Այս մեթոդում հաճելի մասը ապահովվում է հետաքրքիր պատմության, ուսուցչի և սովորողի հաղորդակցության, սովորողի կանխագուշակման եւ մեկնաբանության և պատմության վերընթերցման միջոցով: Ընթերցանությունըև հաղորդակցությունը ներառում են հարցադրումներ այն մասին, թե հաջորդիվինչ է լինելու պատմության մեջ, միաժամանակ հնարավորություն է տրվում երեխային ավարտել ծանոթ պատմության նախադասությունները, խոսել պատմության վախեցնող եւ հետաքրքիր մասերի շուրջ եւ ուղղակի հաճելի ժամանակ անց կացնել: Ուսուցիչները կարող են ստեղծել կարճ պատմություններ ներառող գիրքը և չնայած դա զբաղեցնում է որոշակի ժամանակ, սակայն այն կարող է օգտագործվել բազմակի՝ արդարացնելովստեղծման վրա ծախսված ժամանակը ,,- մեջբերման ավարտ***:Համատեղ գրքի ընթերցումը մեզ հոգեհարազատ էր,որովհետև առանց իմանալու այդ մեթոդի գոյության մասին՝ դա կիրառել էինք 8-րդ դասարանում,երբ անցնում էինք ,,Սասունցի Դավիթ,,էպոսը:Կարևորելով մեր էպոսի դերն ու նշանակությունը՝մենք համարյա մեծ մասը կարդացինք դասի ժամանակ և շատ քիչ մաս մնաց երեխաներին ինքնուրույն կարդալու:Բայց մեր դասերի դեպքում հիմնական ընթերցողները աշակերտներն էին:

Այո՛,կարևոր, շատ կարևոր են գրքերի ընթերցունը:Մաքսիմ Գորկին մի անգամ ասել է. «Գիրքն արժե սիրել, այն կհեշտացնի կյանքը»: Եվ հաճախ գրքերը դառնում են մարդու անհատականությունը ձևավորող հիմնական գործոնները:

Իզուր չէ,որ մեծերը միշտ էլ գնահատել են գրքի դերը.

Պատահական հանդիպումը լավ գրքի հետ կարող է ընդմիշտ փոխել մարդու ճակատագիրը: Մարսել Պրևո

Խոսելով գրքի մասին՝չեմ կարող չվկայակոչել մեր հանճարեղ Չարենցին,գրքերին նվիրված նրա հանրահահայտ տողերը:

Գրքեր կան, որ դրսից նման են հոյաշեն

Դղյակների, սակայն ներս ես մտնում դու երբ —

Գաղջ՝ շնչում է դեմքիդ ամայության փոշին

Եվ սեղմում է կոկորդդ մի մեռյալ ձե՛ռք։

Անտառների նման գրքեր կան թանձր ու մութ,

Կան օվկիանի՛ նման անհուն գրքեր,

Կան զեփյուռի նման, նման քամո՛ւ.

Կան, որ զգվում են մեզ, ինչպես ձեռքեր։—

Ե՛վ սրինգի ձայնով, և՛ շեփորի,

Ե՛վ որոտի ձայնով կան գրքեր,

Եվ կան անձա՛յն գրքեր, որ լռին

Սրսկում են մեր սիրտը եղերական կրքեր...
Օ՛, գրքերի աշխարհը — տիեզերք է անեզր։—

Սակայն ինչպես ծանոթացնել և հասու դարձնել սովորողին ընթերցասրահի գրքի պաշարներին և ինչպես նրա մեջ այդ գրքերը կարդալու հետաքրքրություն և ցանկություն առաջացնել: Այսօրվա երեխան խորշում է մեծ ծավալի գրքերը ընթերցելուց:Այդ է պատճառը,որ երբ հանձնարարում ես գիրք կարդալ,սկզբում նայում են ծավալին,հետո որոշում կարդալ,թե չկարդալ:Ու եթե չի սերմանվել ընթերցանության նկատմամբ սեր փոքր տարիքից,գրականության ուսուցչի գործը ավելի դժվար է դառնում: Շատ կարևոր է դառնում միջին դպրոցում այդ աշխատանքը ճիշտ կազմակերպել,ամուր, կայուն հիմքեր գցել:Մեր աշխատանքի ընթացքում այդ նպատակով իրականացրել ենք մի շարք հնարներ, կազմակերպել ենք միջոցառումներ:Ու հասկանալի է,որ չի կարելի երեխային միանգամից ծավալուն գրքեր կարդալու հանձնարարություն տալ:Ընտրելով փոքր ծավալի տեքստեր ,կարճ ստեղծագործություններ՝ կարելի է հասնել բավական մեծ արդյունքի:

Կարծում ենք՝ արդյունավետ մեթոդներից մեկը գրքի,ստեղծագործության քննարկումն է ,որը կարելի է կազմակերպել թե՛ գրական խմբակի, թե՛ ընթերցանության խմբակի ժամերին և թե՛ դասաժամերի ընթացքում:

Ստորև ուզում եմ ներկայացնել,թե ինչ հաջողությունների հասանք,երբ յոթերորդ դասարանում քննարկեցինք Վիլյամ Սարոյանի ,,Իմ սիրտը լեռներում է,, պիեսը:

7-րդ դասարանում ծրագրային նյութին հատկացված ժամերի քանակը հինգն է;Ուսումնասիրվում են նրա կենսագրությունը և ,,Իմ սիրտը լեռներում է,,թատերախաղը:Այդ հինգ ժամերից մեկը տրամադրվում է Սարոյանի կյանքի ու կենսագրության ուսումնասիրմանը,երեք ժամը ,,Իմսիրտը լեռներում է,, թատերախաղի ուսումնասիրմանը,իսկ մեկ ժամն էլ հատկացվում է ,,Վիլյամ Սարոյան ,,թեմայի ամփոփմանը:

Վիլյամ Սարոյանի կյանքը և կենսագրությունը ուսուցանելիս օգտագործել ենք նախագծային աշխատանքի տարրեր: Հանձնարարվել է աշակերտներին տարբեր աղբյուրներից հանել Վիլյամ Սարոյանի կյանքի և կենսագրության մասին փաստեր,տեեկություններ;Երեխաները հանել էին բազմազան փաստեր ու տեղեկություններ:Մեծ մասը կատարել էր ախատանքը ,նրանք սիրով ներկայացրին:Երեխաները իրենց նյութերով բացահայտեցին,որ Վիլյամ Սարոյանը օտարագիր հայ հեղինակ է:Ասացին, որ 1894-1920թթ.Արևմտյան Հայաստանից հայ ժողովրդի հոսքը, այնուհետև 1937-49թթ. Աքսորները ստիպեցին,որ հայության մի հատված ապրի ու ստեղծագործի իր երկրից,հայրենիքից ։դուրս:Նրանք հեռացան հայրենիքից ու ապաստանեցին օտար երկրներում:Ուր էլ որ նրանք հաստատվել են,նրանք ստեղծել են դպրոց ու գիրք,հիմնել են եկեղեցի և ցանկացել են պահել իրենց ազգայինը,մայրենի լեզուն:Բայց երբեմն էլ ,ապրելով օտար ժողովուրդների մեջ,ուծացում է տեղի ունեցել,ուծացման պայմանները նրանց ստիպել է դրսևորվել այլ ձևով,ստեղծագործել են օտար լեզուններով:Եվ ասպարեզ է եկել օտարագիր տերմինը::Օտարագրությունը մեծ չափերի հասավ հատկապես 20-րդ դարում:Ասպարեզ եկան անգլիագիր,ռուսագիր,ֆրանսիագիր,բուլղարագիր հայ գրողներ:Անգլիագիր հայ գրողներից են Մայքլ Արլենը,Մայքլ Արլեն Կրտսերը,Լևոն Զավեն Սյուրմելյանը:Անգլիագիր հայ գրող է և Վիլյամ Սարոյանը:

որ նրա ընտանիքը Ամերիկայի Ֆրեզնո քաղաք է գաղթել Արևմտյան Հայաստանի Բիթլիս քաղաքից ոչ թե եղեռնի օրերին,այլ ավելի վաղ՝1896-97թթ կոտորածների ժամանակ:Ամերիկայի Ֆրեզնո քաղաքում էլ Արմենակ և Թագուհի Սարոյանների ընտանիքում էլ 1908 թվականին ծնվում է ապագա գրողը:Վաղ հասակում կորցրել է հորը:Մայրը ստիպված է եղել նրան տանել որբանոց:Բայց այստեղ երկար չի մնում գրողը,քանի որ մայրը վերցնում է նրան:Կյանքը նրան ստիպել է մանկուց աշխատել:Եղել է կանաչի վաճառող,թերթ վաճառող:,,Իմ իսկական դպրոցը եղել է փողոցը,,-հետագայում ասել է հեղինակը:Սարոյանի մանկությունն ու պատանեկությունը անցել է հայկական միջավայրում,որտեղից էլ քաղել է իր նախնական շատ տպավորություններ:Սան Ֆրանցիսկոյում փորձել է գրական բախտը,սակայն ձախողվել է:Առաջին անգամ Սիրակ Գորյան կեղծանունով տպագրվել է ,,Հայրենիք,, անգլերեն շաբաթաթերթում:Բայց նրան փառք բերում է առաջին գիրքը՝,,Խիզախ պատանին թռչող ճոճաձողի վրա,, և այլ պատմվածքներ:

Բեղուն եղավ Սարոյանի գրիչը:Հետագայում արդեն մեկը մյուսի ետևից լույս տեսան նրա գործերը:Արձակի համարյա բոլոր ժանրերում էլ փայլեց գրողը:Իսկ պատմվածքներ ստեղծելը նրա համար եղել է գերագույն հաճույք,և ինչպես վկայում են նրան ճանաչողները,դա կատարել է առանց ջանքի ու ճիգի,շարվել են մեկը մյուսի ետևից:Կազմվում է նրա ստեղծագործությունների ժանրերի աղյուսակ՝

պատմվածք-,,Իմ անձը աշխարհի վրա,, , ,,Նարինջները,, , ,,Որտեղ ես ծնվել եմ,այնտեղ մարդիկ բարեկիրթ են,, ,Ճոճաձողով սավառնող պատանին,, , ,,Հայը և հայը,,...

Նովել-,,Յոթանասուն հազար ասորի,, , ,,Սպիտակ ձիու ամառը,, ,Նոնենիների առակը,,....

Վեպ-,,Վիսլի Ջեկսոնի արկածները,,...

Թատերախաղ-,,Իմ սիրտը լեռներում է,,, ,,Հե՜յ,ով կա այդտեղ,, , ,,Խաղողի այգին,, ,Ուզենք-չուզենք՝ հայ ենք,,...

Վիպակ-,,Մարդկային կատակերգություն,, , ,,Հայրի'կ,դու խենթ ես,, , ,,Իմ անունը Արամ է,,... և այլն:

Գրել է նաև ինքնակենսագրական-հուշագրական ժողովածուններ:Հրատարակել է հինգ տասնյակի հասնող գիրք,մի այդքան էլ մնացել է անտիպ:

Առաջին իսկ գրքի հոնորարով Սարոյանը եկավ Հայաստան՝տեսնելու իր նախնիների երկիրը, ծանոթանալու հայ գրողների հետ:Հետագայում էլի շատ անգամ այցելեց Հայաստան ու ծանոթացավ հայ գրողներից շատերի հետ:Հանդիպեց Ե.Չարենցին,Գ.Մահարուն,Հ.Շիրազին,մեծ նկարիչ Մ.Սարյանին ու անվանի կոմպոզիտոր Ա. Խաչատրյանին:Սիրեց իր երկիրը,նրա մարդկանց մասին ,հայի ու նրա երկրի մասին հիացական տողեր գրեց:Իսկ Չարենցի մասին նրա կարծիքը էլ ավելի պարտադրեց հային սիրել մեծ բանաստեղծին: ,,Նա հայ կյանքի ու մշակույթի խորհրդանիշն էր,ինչ երկնքի տակ էլ,որ գտնվեր:Ես զգացի,որ Չարենցն իմ եղբայրն է:Ես սիրեցի նրան,հիացա նրանով:Ես հպարտ էի,որ նրա հայրենակիցն եմ,նրա արվեստակիցը:Ես առհավետ հավատարիմ կմնամ Չարենցի հիշատակին,,:

Հայրենիքի հանդեպ նրա սերը նրան տարավ իր նախնիների ծննդավայր,եղավ Բիթլիսում,գտավ իր նախնիների օջախը ու հետո աշխարհին ավետեց. ,,Ուր որ կերթաս,պոռա Հայաստան,,:

Վիլյամ Սարոյանը վախճանվեց 1981 թվականին մայիսի 26-ին Ֆրեզնոյում;Նա կարծում էր ,որ մահը իրեն պիտի շրջանցի,բայց այդպես չեղավ:

ԻՐ կտակի համաձայն նրա աճյունը բաժանվեց երկու մասի.մի մասը թաղվեց ԱՄՆ-ում,մյուս մասը Հայաստանում:Նա հանգչում է Երևանի պանթեոնում՝ հայոց մեծերի կողքին:

Պետք է նաև արձանագրեմ,որ եղան աշակերտներ,որ հանձնարարությունը չէին կատարել,լոկ միայն լսողի դերում էին,բայց զգացվում էր,որ իրեց լավ չէին զգում,որ չեն մասնակցում դասին:Դասի ավարտից հետո հայտարարեցի,որ բոլորը անպայման պիտի կարդան պիեսը,որ երեք ժամ քննարկելու ենք ստեղծագործությունը,ամփոփման դասին լինելու է խաղ- մրցույթ,լինելու է քննարկում:Բովանդակ ու իմաստալից անցան հաջորդ երեք դասաժամերը:Ուսուցչի գործը հեշտանում է,երբ ավելի շատ սովորողներ են ընթերցում ստեղծագործությունը:16 աշակերտներ բաժանվեցին 3 խմբի:Օգտագործելով համագործակցային դասի տիպը՝սկեցինք քննարկումը:

Առաջին դասին քննարկեցինք պիեսի սյուժեն:Սյուժեի մասին խոսելիս երեխաները բացահայտում են,որ հատկապես դրամատիկական,վիպական երկերում միշտ ընթերցողը գործ ունի դեպքերի,իրադարձությունների,արարքների որոշակի ընթացքի հետ,որը քայլ առ քայլ բացահայտում է հերոսների բնավորությունը,նրանց հարաբերությունը:

Գրական ստեղծագործության մեջ պատկերված դեպքերի,գործողությունների,մարդկային կապերի ամբողջությունը կոչվում է սյուժե:Սյուժեն գործողությունների զարգացման պատմությունն է, ունի իր մասերը՝նախադրություն,հանգույց,գործողության զարգացում,գագաթնակետ և լուծում:Իհարկե, յոթերորդդասարանցի երեխային դժվար է հասկացնել բոլոր մասերը:Այստեղ բավարարվում են մասերը անգիր սովորելով,կարելի է բացատրել նախադրությունը և լուծումը:Երեխաների կարդացած լինելը ստուգելու համար ուսուցիչը առաջարկում է աշակերտներին պատմել սյուժեի հետևյալ հատվածները՝

Ա.Ջոնիի և Մեք-Գրեգորի հանդիպումը:

Բ.Պարոն Կոսակի մոտից հաց ու պանիր բերելու Ջոնիի հնարամտությունը:

Գ.Ջոնիի և Հենրիի հանդիպումը:

Դ.Մեք-Գրեգորի՝ ծերանոց տանելու տեսարանը:

Ե.,,Աթլանթիկ,, ամսագրի մերժումը և Բեն Ալեքսանդրի խոհերն ու ապրումները:

Զ.Մեք –Գրեգորի մահվան տեսարանը և այլն:

Պետք է ասեմ ,որ այս բոլորը փակված ծրարների մեջ էին,երեխաները ընտրում էին 1,2,3.... ,բացվում էր դրվագի անվանումը , և երեխաները պատմում էին վիճակած մասը,դրվագը:Բացի սյուժեից այս դասին խոսվեց նաև ստեղծագործության բնաբանի և կցված ուղերձի մասին;

Բնաբանը հեղինակի կողմից մեջբերվող համառոտ խոսքն է,որ դրվում է երկի սկզբում,ունի ընդհանրացնող նշանակություն, կապվում է ստեղծագործության ընդհանուր գաղափարի հետ:Սարոյանը, որպես բնաբան, օգտագործել է շոտլանդացի մեծ բանաստեղծ Ռոբերտ Բըրնսի ,,Իմ սիրտը լեռներում է,, բանաստեղծությունը:Շոտլանդացին իր հայտնի բանաստեղծության մեջ խոսում է բնության հրաշք էության մասին,որ մարդկային ոգին միշտ ձգտում է դեպ այդ հրաշք գեղությունն ու ազատությունը,դեպի վեհն ու բարձրը:Սարոյանի սիրտն էլ էլ սավառնում է այդ վեհի,բարձրի,բարու ոլորտներում ու թախծում է այնտեղ:

Խոսելով բնաբանի մասին՝ պետք է հիշեցնել,որ Սարոյանը բացի բնաբանից՝ թատերերգությանը կցել է նաև մի ուղերձ՝

Նրան,ով սրտով անեղծ է,

Ով կյանքում բանաստեղծ է,

Բարձրին ու ցածրին,ում կյանքը երգ է,

Եվ ծերին մանուկ և մանկանն անվիշտ,

Ով սրտով լեռներում է միշտ:

Բոլոր նրանց է ուղղված այս ուղերձը,ովքեր մերժված են կյանքից,ովքեր կարոտ են կարեկցանքի ու սիրո,ովքեր թեև պարտված են,բայց չեն մուրում,մի կտոր հացի համար չեն կորցնում իրենց կյանքի ճշմարտությունը,այլ ապրում են հոգով հպարտ ու արի:Նրանք կառչած չեն նյութից, ոգով, հոգևոր արժեքները կարևորող ու դրանցով ապրող մարդիկ են:

Հաջորդ դասին քննարկվեց վեպի գաղափարը,բովանդակությունը:Այս դասին օգտագործվեց հարցադրումների մեթոդը:Որոշ խնդիրներ երեխաները բացահայտեցին,որոշ պնդումներ ուսուցիչը,ու հանգան այն եզրակացության,որ պիեսում հեղինակը առաջ է քաշել հետևյալ խնդիրները.

ա.պատերազմի քննադատություն

բ.արվեստագետի ողբերգության թեման

գ. անհատ,մահկանացու մարդու դժբախտությունն այդ աշխարհում,նրա երազանքների ու իրականության հակադրությունը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներն են:Սոսկալի է պատերազմի ավերիչ դերը բոլոր ասպեկտներով:Սարոյանը ատում է պատերազմը,հեղինակը իր հերոսներից մեկի՝ Բեն Ալեքսանդրի խոհերով ու շուրթերով մեկնում է պատերազմի նողկալի էությունը:,,Առա՜ջ,սպանեցեք բոլորին,պատերազմ հայտարարեք մեկդ մյուսին: Ժողովեք մարդկանց հազարներով և հոշոտե'ք նրանց:Հոշոտե'ք նրանց խեղճ սրտերը,նրանց խեղճ հոգիները և նրանց թշվառ մարմինները:Այլանդակե'ք նրանց:Պոծե'ք նրանց երազները:Ահաբեկե'ք նրանց,խեղեցե'ք նրանց՝ իրար հանդեպ ատելություն բորբոքելով:Ապականեցե'ք կյանքի առասպելը,դուք՝ խելագարներ,քանզի ձեր մեծությունը չափվում է ձեր կատարած ավերմունքով,,:Այո',նողկալի են պատերազմները,որովհետև դրանք ոչնչացնում են կյանքի հեքիաթը,կյանքի առասպելը:Բայց Սարոյանը հավատում է մարդու մեջ եղած լավի ու վեհի հաղթանակին:Այդ մերկացնող խոսքերից անմիջապես հետո նա հայտարարում է.,,Թող որոտան ձեր անզոր թնդանոթները, դուք ոչ մի բան չեք կարող սպանել:Աշխարհում բանաստեղծներ միշտ կլինեն,,:Սարոյանը շատ կուզեր,որ պատերազմ ընդհանրապես չլիներ:Արդյոք հնարավոր է այդ:Ցավոք այսօր էլ պատերազմները շարունակվում են,մենք՝ հայերս ,դա զգում ենք մեր մաշկի վրա,բայց հուսանք որ այս աշխարհի ամենաբարձր արարածը՝մարդը,երբևէ խելամիտ կգտնվի,ու պատերազմները կպակասեն կամ ընդհանրապես չեն լինի:

Հաջորդ խնդիրը,որ Սարոյանը առաջ է քաշել, արվեստի մարդու ողբերգությունն է այդ աշխարհում:Արվեստագետներ են Մեք-Գրեգորն ու Բեն Ալեքսանդրը:Նրանք իսկական, ճշմարիտ արվեստագետներ են,բայց աշխարհը նրանց հաստատվելու իրավունք կարծես չի տալիս:Նրանք ոգով ապրողներ են,մարդու հոգին սնող,ներաշխարհը հարստացնող հոգևոր հաց են առաջարկում,բայց աշխարհը չի ընդունում,ու դժբախտ են դառնում,դառնում են մերժված:Բայց թե դերասանը՝Մեք-Գրեգորը,թե'բանաստեղծը՝ Բեն Ալեքսանդրը, երբևէ չեն կորցնում ինքնահաստատվելու իրենց հավատը,գիտեն,որ մի օր, եթե ոչ իրենք,իրենց տեսակը ինքնահաստատվելու է:Սարոյանը շատ տխուր է,որովհետև հոգով ու ոգով ուժեղ ու հպարտ այս մարդիկ հացի խնդիր ունեն,ստիպված են լինենում պարտքով ապրել:Ինչու է այդպես,ինչու նյութական պայմանները նրանց պիտի խեղճացնեն,փոքրացնեն:Գրողը չի հաշտվում այդ գաղափարի հետ,կուզեր,որ նրանք երջանիկ լինեին:

Եվ ոչ միայն արվեստագետն է դժբախտ այդ աշխարհում,այլ նաև սովորական,մահկանացու մարդն էլ երջանիկ չէ,միշտ նրանց ինչ-որ բան պակասում է երջանիկ լինելու համար :Սարոյանը առաջ է քաշում այն գաղափարը,որ մարդը ունի բարձր երազանքներ,ապրում է բարձրի ձգտումով,բայց իրական կյանքը չի թողնում իրականանան նրանց երազանքները,կյանքը պարտադրում է իր օրենքները:Սարոյանը ուզում է լուծել այս բոլոր խնդիրները ու իր նմանին՝մարդուն,երջանիկ տեսնել:

Մարդու նկատմամբ սարոյանական սերը հենց այս ընբռնումն ունի:Երջանիկ չեն նրա հերոսներից և ոչ մեկը,և եթե կա մեկը,որ ամեն ինչ ունի երջանիկ լինելու համար,բայց երբ տեսնում է իր կողքին տառապող մարդուն,չի կարող հենց այնպես դիտորդ լինել ու անհաղորդ մնալ կողքինի ցավին ու տառապանքներին:Բայց Սարոյանը՝ այդ մեծ հումանիստը,հավատում է որ երբևէ մարդը կհասնի իր իդեալներին ու կկերտի իրեն անհրաժեշտ աշխարհը:

Պետք է ասել,որ այս դասի ընթացքում երեխաները այնքան ակտիվ չէին,ինչպես նախորդ դասին:Ուսուցչի մասնակցությունն էր ավելի մեծ:Հավանաբար 7-րդ դասարանցու համար դեռ դժվարէ երկը խորությամբ հասկանալը,ըմբռնելը:

Շատ ավելի բուռն էր կերպարների քննարկումը:Այստեղ երեխաները ավելի շատ էին խոսում:Երեխաները այնպես լավ էին կարողանում վերլուծել,որ համարյա ուսուցչին ոչինչ չէր մնում :

Կերպարների քննարկման ժամանակ նախ անհրաժեշտ է նշել,որ կա հեղինակի խոստովանությունը այն մասին,որ երկի բոլոր կերպարների նախատիպը հենց ինքն է եղել,նրանցից յուրաքանչյուրը իրենից մաս է կրում իր մեջ:

,,Ես ..Ես իմ կյանքը կգրեմ:.....Ինձի համար գրել և ապրել կյանքը՝ նույնն են:Ջոնին ես եմ,բայց Մեք-Գրեգորն ալ ես եմ:Իմ մեծ մայր հոն է:Իմ հայր,որ ճանչվոր չէի,բանաստեղծ էր:Եվ ատ մասին իմ հայրը ատպես տեսա:Անունն էր Բեն Ալեքսանդր: Կըլլա հայոց անուն Բենիամին Ալեքսանդրյան,,:

Ինը տարեկան Ջոնին Բեն Ալեքսանդրի տղան է:Նա շատ կենսախինդ է,կյանքով լեցուն:Պիեսում կա արևածագի մի հրաշք նկարագրություն,որը կարծես Ջոնիի աչքերով տեսած ու ապրած կյանքն է. ,,Արևը ծագելիս մի մեծ,շքեղ ժպիտ ողողում է նրա դեմքը:Նա աչքի ծայրով նայում է առավոտյան լույսին,կարծես դա իր թաքուն խաղընկերը լինի,որի հետ իրար շատ լավ են հասկանում:Որքան լույսը առատանում է,այնքան այդ խաղը Ջոնիի և արևի միջև գնալով զարգանում է:Ինչպես մի երաժշտական թեմա,և Ջոնին,ոտքի կանգնելով,դեմքը դարձնում է լույսին,,:Ջոնին ինքը կյանքն է,ճարպիկ,հնարամիտ տղա է,կարողանում է դժվարին վիճակներից դուրս գալ,իր խելքի ու հնարամտության շնորհիվ իրեն հանձնարարված աշխատանքը պատվով կատարել:Շատ հետաքրքիր է այն դրվագը,երբ նա պարոն Կոսակի մոտից,իր պերճախոսությամբ ազդելով նրա մտքի ու զգացմունքների վրա, կարողանում է հաց ու պանիր բերել,համոզել նրան,ստանալ իր ուզածը:Համարյա բոլոր դրվագներում էլ երևում է նրա բարությունը,սերն ու հարգանքը դեպի ուրիշները սերն ու հարգանքը դեպի կենդանիները: ,,Ես էլ շատ քաղցած եմ,բայց ոչ ոքի թույլ չեմ տա սպանել անմեղ արարածներին:Նրանք էլ մարդկանց պես իրավունք ունեն ապրելու,,:Այո',այսպես անսպառ է ու անսահման Սարոյանի սերը մարդու,բնության կենդանի արարածների նկատմամբ:

Շատ հատկանշանական է,որ անգամ նրանից մեծերը հավատում են Ջոնիի ուժերին,հենվում են նրա վրա:Թեպետ փոքր է,բայց կյանքի պայմանները,ինքը կյանքը հասցրել է նրան իմաստնացնել:Թատերախաղի վերջում նրա հնչեցրած ,,Ես ոչ ոքի անունը չեմ տալիս,պա,բայց ինչ-որ տեղ մի բան սխալ է,, տողերը իսկական,ճշմարիտ վկայություն են այդ ամենի:

Բեն Ալեքսանդրի և Մեք-Գրեգորի կերպարները կարելի է քննել և' միասնություն որպես,և' առանձին-առանձին ու հետո ընդհանրացում կատարել:Երկու հերոսներն էլ արվեստի մարդիկ են,մեծ արվեստագետներ,բայց մերժված են կյանքի կողմից:Նրանք երկուսն էլ հաջողության չհասած մարդիկ են,արժանիորեն բարձր են գնահատում իրենց ձիրքը,տաղանդը: Զարմանում է Բեն Ալեքսանդրը այդ աշխարհի վրա.,,Ինչու նրանք բարձրաձայն փառաբանում են ամեն բան,բացի լավագույնից,,:

Թեպետ շեփորահար,դերասան Ջասպեր Մեք- Գրեգորի սիրտը շոտլանդական լեռներում է,իսկ հոգնած մարմինը՝ծերանոցում,միևնույն է,նա շարունակում է հաստատվելու համար իր պայքարը,շարունակում է իրական բեմի վրա խաղալ իր մեծագույն դերերը:Նրանք գիտեն,որ իրենց արվեստը հավերժական է,իրենց ստեղծածը մնայուն է,ուզում են հենց դրանով շարունակել ապրել իրենցից հետո ապրողների մեջ. ,,Ութսուն անց եմ և շուտով չվելու եմ աշխարհից: Գնալուց առաջ ուզում եմ դառնալ ձեր մասը,որ ապրելու եք իմ մահից հետո,,:

Թեպետ քիչ դրվագներում է հանդես գալիս Բեն Ալեքսանդրի մայրը՝ մարեն,բայց պիտի խոսել այս կերպարի մասին որպես կարևոր կերպարներից մեկի մասին:Մարեն էլ մեժված է այդ աշխարհում,նա հայրենիք է կորցրել ու հաստատվել հայրենի հողից ու ջրից հեռու:Նրա մեջ ծխում է իր երկրի կարոտը,օտար երկրի կյանքն ու կենցաղը հարազատ չեն նրան,շարունակում է ապրել իր երկի սովորույթներով,խոսել իր մայրենիով:Մարեն մեծ ցավ է զգում,որ թոռը՝Ջոնին, հայերեն չի խոսում:Նա հանդիմանում է նրան,ասում. ,,Հայերեն խոսա,լաո,,:Երբ նա իմանում է,որ Մեք- Գրեգորին ծերանոց են տարել,մեծ ցավով բացականչում է. ,,Վա՜խ,վա՜խ,վա՜խ,խեղճ հալիվոր բանտյարկալ,,:Մարեի մեծագույն երազանքը կրկին իր հողին ու ջրին դառնալն է,նրան տեր լինելն է: Սարոյանի հերոսների համար կյանքը պարզև չէ,այլ մաքառումների,գոյամարտի պատմություն:Օտարության մեջ գնալով ավելի ու ավելի է զգացվում հայրենիքի կարոտը,հայրենիքի գոյությունը ու մարդու գոյության իրավունքը Սարոյանը կարծես նույնական է դարձնում:Գաղթական Մարեի կերպարի կերտումը գալիս է կարծես մեզ ասելու,որ սա Սարոյանի այն գործերից է,որտեղ միավորվում են բուն հայկականն ու ամերիկյանը:

Հետաքրքիր է և Կոսակի կերպարը:Նա սլովակ է:Նա կարողացել է որոշակի հարստություն կուտակել,փոքրիկ կրպակ հիմնել,առևտուր անել:Բայց իր կողքի մարդիկ հաց չունեն,ու նա ստիպված է նրանց պարտքով ապրանք տալ,իսկ առևտուրը այդպես չի կարելի շարունակել,և իվերջո,սնանկանում է:Նպարավաճառը լավ մարդ է,նա գիտի,որ Ջոնին և նրա հայրը երբեք չեն կարողանա վճարել պարտքը,բայց թույլ է տալիս Ջոնիին իրեն ամեն անգամ համոզել,որպեսզի իր կողքի մարդիկ սոված չմնան,նա չի կարողանում ապրել լիարժեք կյանքով,անտարբեր լինել իր շրջապատող մարդկանց նկատմամբ:

Սարոյանը ,խորապես թափանցելով կյանքի ճշմարտության մեջ,որ երբեմն ջլատում է մարդու հոգին,նրան դառնացնում,դարձնում հուսահատ,տխուր,հաշվենկատ,այնուամենայնիվ,չի կորցնում գլխավորը՝ կյանքի սերը,կյանքի անսահման սերը,որը վեր է ամեն տեսակի ճշմարտությունից:Սարոյանի այս բոլոր հերոսներից կարծես հաջողությունը երես է թեքել,բայց նրանք շարունակում են սպասել լավին,շարունակում են հավատալ:Սարոյանի այս պիեսին բնորոշ է մի առանձնահատկություն.հերոսները պատկանում են տարբեր ազգերի:Մեք-Գրեգորը նիշտ ասում է,որ իր տունը հազարավոր մղոններով հեռու է Ֆրեզնոյից,Շոտլանդիայի հանդեպ սերը կարծես ասում է,որ նա շոտլանդացի է,Կոսակը սլովակ է,,իսկ Ջոնիի ընտանիքը հայ է:Սարոյանը ոչ մի տեղ չի ընդգծում ազգությունները՝ կարծես ասելու համար,որ բոլորն էլ մարդ են,բոլորն էլ եղբայրներ են և արժանի են սիրո ու կարեկցանքի:Ընդհանրապես Սարոյանի բոլոր գործերում հանդես են գալիս արաաբներ,իռլանդացիներ,շոտլանդացիներ,,ամերիկացիներ,և բոլորն էլ լավ մարդիկ են:Նույնիսկ թուրք մարդու հանդեպ նա ոչինչ չունի: Սարոյանը ,հանդես գալով ,,մարդը մարդու եղբայրն է,,քարոզի առաջմղումով,Սարոյանը չի մոռանում իր հայ լինելը:Կարծես ամենից շատ նա գրում է հայ մարդկանց մասին,որոնց տեսել էր,ճանաչել էր Ամերիկայում,և բոլորն էլ տարօրինակ,բարի մարդիկ են՝ անսպառ էներգիայով ու ռոմանտիզմով լեցուն:

Կերպարների վերլուծությունից հետո ուսուցիչը արդեն քննարկումը տանում է թատերախաղի թարգմանության,նրա վրա հիմնված բեմադրության,ստեղծված կինոյի մասին:

Նրա ստեղծագործությունները թարգմանվել են աշխարհի շատ լեզուներով,թարգմանվել են և հայերեն:

Հաջորդ ժամին արդեն բուն քննարկումն էր:Քննարկումը ընթացավ հետյալ դասապլանով:

Ամփոփիչ դաս

Առարկան՝ գրականություն

Թեման՝<<Իմ սիրտը լեռներում է>> թատերախաղը

Նպատակը՝իմանա գրական ստեղծագործություն,նրա մասերը՝բնաբան,սյուժե,բովանդակություն,վերջ,կարողանա գրական հատվածի ենթատեքստ կարդալ

Սոցիալական նպատակ՝մարդը պիտի սիրի իր նմանին՝մարդուն,ատելություն դեպ կյանքի առասպելն ու հեքիաթը ջնջող պատերազմները,,հոգևոր արժեքների կարևորություն,լոկ նյութով ապրելու փիլիսոփայության անհեթեթություն:

Դասը՝ խիկ համակարգով

Դասը սկսվում է ուսուցչի ներածական խոսքով,որ ավարտեցին հատկացված ժամաքանակով թեմայի ուսումնասիրությունը,իմացան,որ մարդու ստեղծած գրականության մեջ փայլում է Վիլյամ Սարոյան անուն-ազգանունը:Նրան գիտեն աշխարհի բոլոր անկյուններում,կարդում են ամենուրեք ու հիանում նրա անսահման բարությամբ:Վեհի բարու,գեղեցիկի նկատմամբ սարոյանական սերը անսահման է,ու մեծն գրողը ուզում է այդ սիրով վարակել աշխարհը,մարդուն:Այսօր ամփոփելու են իրենց գիտելիքները,քնարկելու են <<Իմ սիրտը լեռներում է >>ստեղծագործությունը:

Դասը կրելու է մրցույթի բնույթ.այն խաղ-մրցույթ է:Անցկացվում է համակարգչի կաբինետում,նախօրոք ամբոխջ ծրագիրը մշակվում է,հարցերը գնում են մեծ էկրանին:

Խթանման փուլ

Հնչում էՄեք- Գրեգորի շեփորի համար գրած Առնո Բաբաջանյանի երաժշտությունը,և դասարանի լավագույն ասմունքողները(3 աշակերտ)արտասանում են Ռոբերտ Բյորնսի <<Իմ սիրտը լեռներում է>> բանաստեղծությունը:

Իմ սիրտը լեռներում է, այստեղ ծանր եմ շնչում ,

Իմ սիրտը լեռներում է,ուր քարայծն է թռչում...

Իմաստի ընկալման և կշռադատման փուլում արդեն բուն մրցույթն է:Ղեկավարն,հիարկե,ուսուցիչն է:Կազմվում է գնահատող խումբ:Լավ կլինի՝գնահատողները լինեն մասնագետներ:Գնահատումը հատուկ սանդղակով:

Ա.Իմացություն,խոսելու,մտքերը դրսևորելու կարողություն-4 միավոր

Բ.Գրավոր աշխատանք- 4 միավոր

գՀամագործակցային աշխատանք -2 միավոր

Հարց առաջին

Խմբերը պիտի ընտրեն անուն,որը կապված կլինի քննարկվելիք նյութի հետ,հիմնավորեն ընտրությունը:Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է երկու կարծիք:Գնահատողները գնահատում են,իսկ երեխաները ընդհանուր հայտարարի են գալիս,թե որ անունն են ընտրում:

Հարց 2-րդ

Ինչ է նշանակում ստեղծագործության բնաբան:Որն է<< Իմ սիրտը լեռներում է>>թատերախաղի բնաբանը,կապը երկի հետ: Ինքնաթելադրությամբ ներկայացնել բնաբանից հատված:

Հարց 3-րդ

Ինչ է նշանակում ստեղծագործության սյուժե:Յուրաքանչյուր խումբ պետք է սյուժեից ներկայացնի որևէ դրվագ:Ընտրում է դրվագը՝ա,բ,գ,դ,ե,հետո նոր բացվում է հարցը:

Ա.Ջոնիի և Մեք-Գրեգորի հանդիպումը թատերախաղի սկզբում:

Բ.Կոսակի մոտից հաց բերելու դրվագը :

Գ.Մեք-Գրեգորի մահվան տեսարանը:

Դ.Հենրիի և Ջոնիի հանդիպումը:

Ե<<.Աթլանտիկ>> ամսագրի մերժումը և Բեն Ալեքսանդրի ապրումներն ու խոհերը:

Այս ձևը,պետք է ասել,որ երեխաների կարդացվածությունը ստուգելու լավ միջոց է,կարելի է օգտագործել բարձր դասարաններում՝ստուգելու՝արդյոք կարդացել են գեղարվեստական երկը:

Հարց 4-րդ

Կերպարների վերլուծություն:Թիմին բաժին ընկած կերպարի նաև մեկ գրավոր վերլուծություն :

Ա Ջոնիի կերպարը

Բ.Բեն Ալեքսանդրի կերպարը

Գ.Մարեի Կերպարը

Դ.Մեք –Գրեգորի կերպարը

Հարց 5-րդ

Բովանդակություն,այն խնդիրները,որ առաջ է քաշում հեղինակը:Նորից ընտրություն:

Ա.Առաջին համաշխարհային պատերազմ,պատերազմի քննադատություն ընդհանրապես,պատերազմի սարոյանական ըմբռնումը Բեն Ալեքսանդրի շուրթերով:

Բ.Մերժված արվեստագետների ողբերգությունը:Դեպի վեհը,բարձրը գնալու նրանց պայքարը ու անկոտրուն հավատը իրենց տեսակի երբևէ հաստատման ճանապարհին:

Գ.Մահկանացու,սովորական մարդու ոչ երջանիկ լինելը այդ աշխարհում,նրանց երազանքների անկատար մնալը:

Շատ կարևոր է ,որ այսխնդիրները լուսաբանելիս հանգեցնել այն մարդու նկատմամբ Սարոյանի մեծ սիրուն: Սարոյանը կուզեր մարդուն՝այս աշխարհի բարձր էակին, երջանիկ տեսնել:

Հարց 6-րդ

Ինչպես է ավարտվում թատերախաղը:Ինչ է պարտադրում ընթերցողին,ինչ խոհեր է արթնացնում:Գրել Ընդհանրացում ու ենթատեքստեր պարունակող հատվածներ,բացել ենթատեքստերը:Գրավոր ներկայացնել երկու մեկնություն:

Պիտի կարողանան գրել և բացատրել՝

Ես ոչ ոքի անունը չեմ տալիս,պա,բայց ինչ-որ մի տեղ մի բան սխալ է(Ինչն է սխալ,ինչու):

Ես էլ շատ քաղցած եմ,բայց ոչ ոքի թույլ չեմ տա սպանել անմեղ արարածներին:

Իմսիրտը լեռներում է,իմ սիրտը թախծում է այնտեղ(ինչու լեռներում,ինչու է թախծում):

Փողը դեռ ամեն ինչ չէ(ինչու):

Բանաստեղծներ միշտ կլինեն կյանքում(ինչին է հավատում գրողը):

Ութսուն անց եմ և շուտով չվելու եմ աշխարհից:Գնալուց առաջ ուզում եմ դառնալ ձեր մասը,որ ապրելու եք իմ մահից հետո(ինչպես է դառնալու մաս):

Ես կխաղամ Լիր արքայի մահվան տեսարանը:Ես կխաղամ բոլոր տեսարանները մահվան (արվեստի ընդհանրացնող ուժը,հավերժ մնայուն լինելու գաղափարը):

Հարց 7-րդ

Խոսել պիեսի բեմադրության,ստեղծված կինոյի մասին:

Լրացնել մեկ բառով կամ բառակապակցությամբ:

1.Երբ է ծնվել Սարոյանը:

2.Սարոյանի ծնողների ծննդավայրը:

3.Սարոյանի ծննդավայրը:

4.Երեխաների անունները:

5.Կնոջ ազգությունը:

6.Ինչ լեզվով է գրել:

7.Աճյունի մի մասը որտեղ է թաղված:

8.Սարոյանի կեղծանունը առաջին տպագրության ժամանակ:

9.Առաջին տպագիր գիրքը:

9.Թվարկել օտարագիր հայ ուրիշ հեղինակ:

Ամփոփվում է դասը,գնահատողները հայտարարում են հաղթող խմբի անունը,մեկնաբանում:

Իսկ վերջում լսում են Վ. Սարոյանի ասած խոսքերը<<Հայը և հայը>> yotube- ից,և ավարտվում է դասը:

Ուզում ենք ներկայացնել քննարկման մասնակիցների և ընթերցողների թիվը՝ ըստ աղյուսակի:

	Ակտիվ մասնակիցների թիվ	Պասիվ մասնակիցների թիվ	Ընդհանրապես չմասնակցոների թիվ	Երկը ընթերցողների թիվ
Առաջին դաս	8	4	4	
Երկրորդ դաս	8	6	2	8
Երրորդ դաս	6	8	2	10
Չորրորդ դաս	10	6	1	13
Հինգերորդ դաս	10	6	-	13

Թեպետ այսքան երկար ժամանակ հատկացրինք,բայց էլի եղան աշակերտներ ,որոնք չկարդացին պիեսը [3 աշակերտ]:

Ինչպես փորձը ցույց տվեց, աշխատանքն անչափ հետաքրքիր ու գրավիչ էր սովորողների համար, նրանք դասի սկզբից մինչև վերջ ոգևորված էին, հետաքրքրված, ,ակտիվ: Աշխատանքի ընթացքում հստակ երևացին մարդկային մի շարք հատկանիշներ՝ հանդուրժողականություն, կողքինի կարծիքը լսելու և հարգելու կարողություն, ինքնուրույնություն, ստեղծականություն….Այնքան ոգևորված էին,որ հարցնում էին,թե երբ են նոր քննարկում անելու:

Այո, գրքի քննարկումը համագործակցային դասի միջոցով ընթերցանության խրախուսման ձևերից մեկն է և շատ կարևոր:

Այն խրախուսում,ոգեշնչում,հետաքրքրություն է առաջացնում, երեխան ցանկանում է անպայման իր մասնակցությունը ունենալ այդ քննարկմանը:

Կարծում ենք,որ նման աշխատանքները պիտի հաճախակի լինեն,որովհետև գիրքը,գեղարվեստական ստեղծագործությունը օգնում է էլ ավելի լավ ճանաչել մեր շրապատող աշխարհը,ներթափանցելմարդկային հարաբերությունների,բարոյական արժեքների աշխարհը:

Համագործակցային ուսումնառությունը,դասերը սովորեցնում են,որ սովորողները իրենց նպատակին կարող են հասնել միասին,յուրաքանչյուրի դերը մեծ է:Սովորողները օգնում են միմյանց,իրենք վերահսկում են իրար,սկսում են հավատալ իրենց ուժերին :Պետք է ասել,որ կարևոր է նաև ուսուցչի դերը այստեղՆա պիտի իմացական հետաքրքրություն առաջ բերի դեպի գեղարվեստական գործերը,խրախուսի,խորացնի նրանց հետաքրքրությունը:Այո,մեծ դեր ունեն ուսուցչի պլանավորած հարցերը:Ճշտ հարցերը օգնում են սովորողին համեմատություններ անցկացնել,ընդհանրացնել,պատճառաետևանքային կապեր փնտրել,կռահել հեղինակի մտադրությունը,հիմնավորել փաստարկները,երևակայել,ստեղծագործել:

Ընթերցանությունը գրավիչ ու հետաքրքիր դարձնելու մեկ այլ հնար ևս հաճաակի եմ գործածել գրականության իմ դասերի ընացքում:

Այսօր մենք ապրում ենք թվային դարաշրջանում: Գաղտնիք չէ,որ գրական ստեղծագործությունների մեծ մասը դարձել են սերիալներ,գեղարվեստական ֆիլմեր: Ֆիլմ դիտելը շատ ավելի քիչ ժամանակ է խլում,քան ընթերցանությունը,և երեխաները հանձնարարված գիրքը կարդալու փոխարեն նայում են ֆիլմը,գալիս պատմում:Իհարկե, այն երեխան,որ միջակ կարողություններ ունի դժվար է նրան պարտադրել,որ կարդա,դիտելն էլ նրա դեպքում բավարար է,բայց լավ ու գերազանց սովորղների համար պետք է գտնել ձև,մեթոդ,որ կարդան:Ու ես այդպիսի ի փորձարարական աշխատանք կատարեցինք,երբ անցնում էինք Էռնեստ Հեմինգուեի ,,Ծերունին և ծովը,,պատմվածքը;Նախ ամբողջ դասարանով դիտեցինք ֆիլմը:Հետո հայտարարեցի,որ պիտի կարդանք ստեղծագործությունը՝նախապես մշակելով հարցեր շարժանկարի և ստեղծագործության դրվագների վերաբերյալ,տանելով զու գահեռներ:

1.Կինոյի սկիզբ-ստեղծագործության սկիզբ;

2.Ծերունու և տղայի կերպարների համապատասխանությունները՝ արտաքին,նեքին:

3.Ծերունու՝ ձուկ բռնելու դրվագի նկարագրությունը կինոյում և երկում,որն է ավելի շքեղ:

4.Վերջ:Նմանությունները և տարբերությունները:

Պետք է ասեմ,որ այստեղ ևս հաջողեցինք:Երբ երեխաների հետ աշխատանքը ճիշտ է կազմակերպվում,արդյունքը միշտ էլ գոհացուցիչ է լինում:Հարցերը օգնեցին,որ երեխանները գտնեն կինոյի և գրքի տարբեր հատվածներ միջև եղած նմանություններն ու տարբերությունները, հատկապես ավելի շատ կանգ առանք երազած ձուկը բռնելու կինոյի դրվագի և Հեմինգուեի նկարագրության վրա,հանգեցինք այն եզրակացության,Հեմինգուեի նկարագրությունը հանճարեղ էր:Կինոն դերասանական խաղի միջոցով չի կարող ատահայտել հերոսի խոհերն ու ապրումները լիարժեքորեն,,իսկ գրականությունը՝ խոսքի արվեստը, այս առումով շատ ավելի լայն ու անսահման հնարավորություններ է ընձեռում:Համագործակային մեթոդ այստեղ ևս տվեց իր պտուղները,ինպես նախորդ նյութի քննարկման ժամանակ:

Օգտագործված գրականություն- Լուսինե Գաբրիելյան՝ Ընթերցանության զարգացման նոր մոտեցումներ

Հասմիկ Հակոբյան՝,,Կարդալ,թե ընթերցել,,

Գոհար Բալջյան՝Ընթերցանություն

.Ս.Վիլյամ Սարոյան-,,Իմ սիրտը լեռներում է,,,Դավիթ Գասպարյան